

ԾԱՆ-ի սույն թարգմանությունը հիմնված է փաստաթղթի՝ 2016թ. հունիսի 23-ով թվագրված անգլերեն տարբերակի վրա:



ASIAN DEVELOPMENT BANK

## Հայաստան. Հայաստան-վրացական սահման միջպետական ճանապարհի (M6՝ Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագիր

Ծրագրի անվանումը	Հայաստան-վրացական սահման միջպետական ճանապարհի (M6՝ Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագիր	
Ծրագրի համարը	49244-002	
Երկիր	Հայաստան	
Կարգավիճակ	Առաջարկված է	
Ծրագրի տեսակը / Աջակցության եղանակը	Վարկ	
Ֆինանսավորման աղբյուրը /Գումարը	<b>Վարկ. Հայաստան-վրացական սահման միջպետական ճանապարհի (M6՝ Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագիր</b>	
	Սովորական կապիտալ ռեսուրսներ	50.00 միլիոն ԱՄՆ դոլար
	Եվրոպական ներդրումային բանկ	50.00 միլիոն ԱՄՆ դոլար
Ռազմավարական նպատակներ	Շրջակա միջավայրի տեսանկյունից շարունակական աճ Ներառական տնտեսական աճ Տարածաշրջանային ինտեգրում	
Փոփոխության շարժիչ ուժերը	Կառավարման և կարողությունների զարգացում Գիտելիքային լուծումներ Գործընկերություններ Մասնավոր հատվածի զարգացում	
Ոլորտ / Էնթաճյուղ	Տրանսպորտ – ճանապարհային տրանսպորտ (ոչ քաղաքային)	
Գենդերային	Գենդերային բաղադրիչներ չկան	

հավասարություն և  
ինտեգրում

Նկարագրություն

ՀՀ կառավարությունը դիմել է ԱԶԲ-ին խնդրանքով՝ զուգահեռ համաֆինանսավորելու այս ծրագիրը Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) հետ միասին՝ տրամադրելով վարկ, որի գումարը կազմում է 35.6 մլն եվրո (40.5 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար 2015 թ. մայիսի դրությամբ): Ծրագիրը մշակվել է ԵՆԲ-ի կողմից 2014թ. մարտին: Տեխնիկատնտեսական ուսումնասիրությունն ու շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատումն ավարտվել են 2015թ. մարտին, իսկ մանրամասն նախագծումն ավարտվել է 2015.թ հոկտեմբերին: Հիմնվելով տեխնիկատնտեսական ուսումնասիրության և մանրամասն նախագծման տվյալների վրա, ծրագրի ընդհանուր ներդրումային արժեքը կազմում է մոտ 127 մլն ԱՄՆ դոլար, այդ թվում՝ 20% ԱԱՀ, և այն բաշխվելու է ԱԶԲ-ի, ԵՆԲ-ի և Հայաստանի կառավարության միջև: Ծրագիրը բաժանված է երկու մասի, յուրաքանչյուրը մոտ հավասար արժողությամբ՝ 40 միլիոն ԱՄՆ դոլար (առանց ԱԱՀ): Մաս 1 (K0 + 000 K38 + 450) և մաս 2 (K38 + 450 K91 + 000): Պայմանավորվածության համաձայն, ԵՆԲ-ն պետք է զուգահեռ համաֆինանսավորի մաս 1-ը, իսկ ԱԶԲ-ն կֆինանսավորի մաս 2-ը:

Ծրագրի հիմնավորումը և  
կապը երկրի /  
տարածաշրջանի  
ռազմավարության հետ

Առաջարկվող ծրագիրը համահունչ է կառավարության ռազմավարությանը՝ զարգացնելու կայուն և բարձր որակի ճանապարհային ենթակառուցվածքը, և համապատասխանում է ԱԶԲ-ի տրանսպորտային ռազմավարությանը՝ Հայաստանը Վրաստանի հետ կապող այլ ճանապարհների բարելավման առումով: Ծրագիրը սկսվում է Վանաձորից, որը Հայաստանի երրորդ ամենամեծ քաղաքն է և գտնվում է Երևանից դեպի հյուսիս 130 կմ հեռավորության վրա, և ավարտվում է Բագրատաշեն քաղաքում, Վրաստանի հետ սահմանին՝ ընդհանուր երկարությունը 90 կմ: Վանաձորի և Ալավերդիի միջև (մոտ 44 կմ) ճանապարհն անցնում է լեռնային հատվածում մի քանի կտրուկ շրջադարձերով, կտրուկ թեքություններով, նեղ կամուրջներով և երեք հին թունելներով, որոնք պետք է նորացվեն: Ճանապարհը խոցելի է բնության աղետների, ջրհեղեղների, ձյան, սողանքների և ընկնող ժայռաքարերի առկայության պատճառով, ինչը բացասաբար է ազդում ճանապարհի սպասարկման մակարդակի վրա և ճանապարհից օգտվողների համար ճանապարհային անվտանգության ռիսկերի մեծ հավանականություն է ստեղծում: Ծրագիրը

կկրճատի Հայաստանի և Վրաստանի միջև ճանապարհորդության ժամանակը թե՛ ուղևորների և թե՛ բեռների համար, կնվազեցնի տրանսպորտային ծախսերը և կվերացնի ճանապարհային անվտանգությանը սպառնող վտանգները:

Ծրագրի ազդեցությունը	Կանխել ճանապարհային ցանցի արագացված վատթարացումը և ապահովել անվտանգ, արագ և հեշտ փոխադրում:
Արդյունքը	Տրանսպորտի արդյունավետության ու անվտանգության բարելավում M6՝ Վանաձոր - Բագրատաշեն հատվածում:
Ելքային արդյունքները	M6՝ Վանաձոր - Բագրատաշեն հատվածի բարելավում  Ճանապարհային անվտանգության և տարողունակության բարելավում

Աշխարհագրական դիրքը

### Երաշխիքների դասերը

Շրջակա միջավայր	B
Հարկադիր վերաբնակեցում	B
Տեղաբնիկներ	C

### Բնապահպանական և սոցիալական ասպեկտների ամփոփագիր

Բնապահպանական ասպեկտներ Վերակառուցումը տեղի կունենա առկա օտարման գոտու շրջանակներում, չի նախատեսվում հողի խոշոր օտարում, սակայն հայտնաբերվել են վերաբնակեցման և բնապահպանական փոքրածավալ ազդեցություններ: Նախնական գնահատումը, որը հիմնված է ԵՆԲ-ի ուսումնասիրության վրա, նշում է, որ մի քանի կառույցներ մասնակի ազդեցության կենթարկվեն ծրագրի արդյունքում: Աննշան վերադասավորումների արդյունքում հավանական է, որ լրացուցիչ հող կպահանջվի աշխատանքների համար: Կպատրաստվի վերաբնակեցման ծրագիր և շրջակա միջավայրի նախնական քննություն: Ծրագիրը նախնական դասվել է B կարգի շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից:

Հարկադիր վերաբնակեցում

Առաջարկվող ծրագիրը նախատեսում է վերակառուցել և բարելավել առկա երկգիծ M6 մայրուղին, որը գտնվում է Հայաստանի հյուսիսում՝ Վանաձորից Ալավերդի ընկած հատավածից մինչև Վրաստանի հետ սահմանը՝ մոտ 90 կմ ընդհանուր երկարությամբ, ԵՆԲ-ի կողմից զուգահեռ համաֆինանսավորմամբ: ԵՆԲ-ի ծրագիրը ներառում է առաջին 37 կմ, իսկ ԱԶԲ-ի ծրագիրը՝ վերջին 53 կմ: ԱԶԲ-ն և ԵՆԲ-ն պայմանավորվել են միասնական մոտեցում կիրառել սոցիալական ռիսկերի գնահատման և պլանավորման գործընթացում, որը ներառում է փաստաթղթերի, խորհրդատվության և հրապարակման/բացահայտման/ վերաբերյալ պահանջները: ԱԶԲ-ի ծրագրի համար կատարվելու է մոտ 70,000 մ<sup>2</sup> հողի օտարում ճանապարհի բարելավումների կարևորագույն կետերում, սակայն ֆիզիկական տեղահանում չի նախատեսվում: Առաջարկվող ծրագրի հարկադիր վերաբնակեցման ասպեկտը դասվել է B կարգի: Վերաբնակեցման ծրագիրը մշակվում է որպես ծրագրի նախապատրաստման տեխնիկական օժանդակության մի մաս:

Տեղաբնիկներ

Առաջարկվող ծրագիրը նախատեսում է վերակառուցել և բարելավել առկա երկգիծ M6 մայրուղին, որը գտնվում է Հայաստանի հյուսիսում՝ Վանաձորից Ալավերդի ընկած հատավածից մինչև Վրաստանի հետ սահմանը՝ մոտ 90 կմ ընդհանուր երկարությամբ, ԵՆԲ-ի կողմից զուգահեռ համաֆինանսավորմամբ: ԵՆԲ-ի ծրագիրը ներառում է առաջին 37 կմ, իսկ ԱԶԲ-ի ծրագիրը՝ վերջին 53 կմ: ԱԶԲ-ն և ԵՆԲ-ն պայմանավորվել են միասնական մոտեցում կիրառել սոցիալական ռիսկերի գնահատման և պլանավորման գործընթացում, որը ներառում է փաստաթղթերի, խորհրդատվության և հրապարակման/բացահայտման/ վերաբերյալ պահանջները: Լինելու է մինիմալ հողի օտարում և կարևորագույն կետեր, ինչը մասնակիորեն կազդի հողատերերի վրա, բայց երկիրը չունի տեղաբնիկների համայնքներ, ինչպես դրանք սահմանված են սոցիալական և բնապահպանման անվտանգության քաղաքականությունում գործառնական նպատակներով: Առաջարկվող ծրագրի տեղաբնիկների ասպեկտը դասվել է C կարգի:

**Հաղորդակցություն շահակիցների հետ, նրանց մասնակցությունն ու խորհրդատվությունը**

Ծրագրի նախագծման փուլում

Խրախուսվում է շահագրգիռ կողմերի մասնակցությունը հանդիպումներին ծրագրի նախագծման ընթացքում:

Ծրագրի իրականացման փուլում

Պարբերաբար կանցկացվեն հանրային խորհրդակցություններ համապատասխան ՀԿ-ների և տեղական բնակիչների հետ՝ ապահովելու ավելի լայն մասնակցություն և տեղեկատվության փոխանակում:

### Բիզնես հնարավորություններ

Խորհրդատվական ծառայություններ Բոլոր խորհրդատվական ծառայությունները, որոնք պետք է ֆինանսավորվեն, պատվիրվելու են ԱԶԲ-ի խորհրդատվական ծառայությունների օգտագործման վերաբերյալ ուղեցույցների համաձայն:

Գնումներ Բոլոր ապրանքներն ու աշխատանքները, որոնք պետք է ֆինանսավորվեն, պատվիրվելու են ԱԶԲ-ի գնումների վերաբերյալ ուղեցույցի համաձայն:

### Պատասխանատու պաշտոնյաներ

Պատասխանատու պաշտոնյա ԱԶԲ-ում Ջիանգրո Նինգ

Պատասխանատու բաժին ԱԶԲ-ում Կենտրոնական և արևմտյան Ասիայի բաժին

Պատասխանատու ստորաբաժանում ԱԶԲ-ում Տրանսպորտի և կապի ստորաբաժանումը, Կենտրոնական և արևմտյան Ասիայի բաժին

Իրականացնող գերատեսչություններ **Տրանսպորտի և կապի նախարարություն,**  
Հայաստան, Երևան  
Փոստարկղ 69, 0010  
Նալբանդյան փ.

### Ժամանակացույց

Հայեցակարգի ընդունում 2016թ. մարտի 30-ը

Փաստերի հավաքագրում 2016թ. փետրվարի 15-ից մինչև 2016թ. փետրվարի 26-ը

Տնօրինության վերանայում/հաստատում 2016թ. հուլիսի 19-ը

Հաստատում -

Վերջին ստուգող առաքելություն -

Ծրագրի ամփոփ նկարագրերը (ԾԱՆ) պարունակում են նախագծի կամ ծրագրի մասին համառոտ տեղեկատվություն: Քանի որ ԾԱՆ-ը ընթացիկ աշխատանքային փաստաթուղթ է, դրա սկզբնական տարբերակում գուցե ներառված չլինեն որոշ տեղեկություններ, սակայն նոր տեղեկությունների ի հայտ գալուն զուգահեռ դրանք նույնպես կներառվեն փաստաթղթում: Առաջարկվող ծրագրերի մասին տեղեկատվությունը նախնական և ուղղորդող բնույթ է կրում: ԱԶԲ-ն տրամադրում է սույն Ծրագրի ամփոփ նկարագրում (ԾԱՆ) պարունակվող տեղեկատվությունը բացառապես որպես օգտվողների համար ռեսուրս՝ առանց որևէ հավաստիացման: Մինչդեռ ԱԶԲ-ն փորձում է ապահովել բարձր որակի բովանդակություն, այդ տեղեկատվությունը տրամադրվում է «ինչպես կա», առանց որևէ տեսակի բացահայտ կամ ենթադրվող երաշխիքների, ներառյալ, առանց սահմանափակման, առևտրային օգուտների, կոնկրետ նպատակի համար պիտանիության և խախտման բացակայության երաշխիքները: ԱԶԲ-ն, մասնավորապես, չի երաշխավորում ցանկացած այդպիսի տեղեկատվության ճշգրտությունը կամ ամբողջականությունը: